ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ԱՐՄԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

27 17.12.2012թ.

ԱՐՄԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ 2012Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

,,Գործադիր իշխանության մարմնի,, գործառնական դասակարգման ծրագրի տնտեսագիտական դասակարգման 4252 հոդվածի ծախսը պակասեցնել 160.0 հազ. դրամով ճշտված պլանը սահմանել 340.0 հազ. դրամ, 4232 հոդվածի ծախսը պակասեցնել 110.0 հազ. դրամ ճշտված պլանը սահմանել 15.0 հազ. դրամ, 4212 հոդվածի ծախսը պակասեցնել 60.0 հազ. դրամով , ճշտված պլանը սահմանել 680.0 հազ. դրամ:

2. ,,Ընդհանուր բնույթի տնտես. և առևտր. հարաբերություններ,, գործառնական դասակարգման /բաժին 4, խումբ 1, դաս 1, ծրագիր 51/ ծախսային ծրագրի 4213 հոդվածի ծախսը պակասեցնել 150.0 հազ. դրամով ճշտված պլանը սահմանել 50.0 հազ. դրամ , 4251 հոդվածի ծախսը պակասեցնել 150.0 հազ. դրամով ճշտված պլանը սահմանել 350.0 հազ. դրամ:

3.,,Հասարակական կազմակերպութ. աջակցութ.,, գործառնական դասակարգման /բաժին 10, խումբ 7, դաս 1, ծրագիր 55/ ծախսային ծրագրի 4819 հոդվածի ծախսը պակասեցնել 70.0 հազ. դրամով ճշտված պլանը սահմանել 230.0 հազ. դրամ:

4. ,,Համայնքի մշակույթի և ազատ ժամանց,, գործառնական դասակարգման /բաժին 8, խումբ 2, դաս 3, ծրագիր 51/ ծախսային ծրագրի 4239 հոդվածի ծախսը ավելացնել 100.0 հազ դրամով , ճշտված պլանը սահմանել 900.0 հազ. դրամ:

4.,,Սոցիալական հատուկ արտոնություններ,, /բաժին 10, խումբ 7, դաս 1, ծրագիր 54/ գործառնական դասակարգման ծախսային ծրագրի տնտեսագիտական դասակարգման 4729 հոդվածի ծախսը ավելացնել 440.0 հազ. դրամով , ճշտված պլանը սահմանել 4248.0 հազ դրամ:

5.,,Հանգիստ, մշակույթ, կրոն /այլ դաս/,, գործառնական դասակարգման /բաժին 8, խումբ 6, դաս 1, ծրագիր 51/ ծախսային ծրագրի տնտեսագիտական դասակարգման 4239 հոդվածի ծախսը ավելացնել 100.0 հազ. դրամով, ճշտված պլանը սահմանել 1320.0 հազ. դրամ:

6.,,Զրամատակարարում և կոյուղու համակարգ,, գործառնական դասակարգման / բաժին 6, խումբ 3, դաս 1, ծրագիր 51/ ծախսային ծրագրի 4213 հոդվածի ծախսը ավելացնել 60.000 հազ. դրամով, ճշտված պլանը սահմանել 880.0 հազ. դրամ

Ավագանու անդամներ՝ /ստորագրություններ՝ կողմ,դեմ,ձեռնպահ,նշելով բոլորի անուն,ազգանունները,ներառյալ բացակաները/

Կողմ – 7 Դեմ – 0 Ձեռնպահ – 0

1. Ս. Ադամյան
2. Ռ. Ձեյնալյան
3. Գ. Համբարձումյան
4. Ք. Մկրտումյան
5. Բ. Շահնազարյան
6. Մ. Շահվերդյան
7. Յ. Պետրոսյան

Կ/Տ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ Հ.ՁԵՅՆԱԼՅԱՆ

/ստորագրություն/ /անուն, ազգանուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ԱՐՄԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 17.12.2012թ.

2013Թ.-Ի ԱՐՄԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՅՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Հաստատել 2013թ.-ի տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

Տեղական տուրքերի դրույքաչափեհո

1.<< Օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի շինությունների /ներառյալ՝ ոչ հիմնական շինարարության/ տեղադրման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

Հիմնական օբյեկտների համար՝

1/ մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական /ամառանոցային տների, ինչպես նաև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 5.000 /հինգ հազար/ դրամ.

2/ սույն կետի ,,ա" ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա/ 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 10.000 /տասն հազար/ դրամ:

բ/ 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 16.500 /տասնվեց հազար հինգ հարյուր/ դրամ:

գ/ 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 23.000 /քսաներեք հազար/ դրամ:

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3/ մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1000 /մեկ հազար/ դրամ:

4/ 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1600 /մեկ հազար վեց հարյուր/ դրամ:

1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ կետերի համար կիրառված է 0.3 գործակիցը

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների քաղաքաշինական այլ օբեկտների վերակառուցման, որժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների /բացառությամբ

<< Օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ համար եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով.

չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի առրծառական նշանակության փոփոխություն մինչև 3000 /երեք հազար/ դրամ:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000 /հինգ հազար/ դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1/ ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար հինական և ոչ հինական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 3000 /երեք հազար/ դրամ:

2/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար հինական և ոչ հինական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 3000 /երեք հազար/ դրամ:

5. Համայնքի տարածքում՝

1/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 /երեք հարյուր հիսուն/ դրամ:

2/ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանածախ առևտրի կետերում կեղուկ վառելիքի /գազի/ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիք տարվա համար սահմանվում է 100.000 /մեկ հարյուր հազար/ դրամ:

3/Խանութներում, կրպակներում տեխնիկականն հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում 20.000/ քսան հազար / դրամ:

6. Համայնքի տարածքում խաղատները, հանրային սննդի օբյեկտները, բաղնիքները /սաունաները/, զվարճանքի օբյեկտները ժամը 24^{00}-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ ընթացիք տարվա համար սահմանվում է՝

1/ առևտրի օբյեկտների համար 25.000 /քսանհինգ հազար/ դրամ:

2/ հանրային սնունդ և զվարճանքի օբյեկտների համար 50.000 /հիսուն հազար/ դրամ:

3/ բաղնիքների /սաունաների/ համար 200.000 /երկու հարյուր հազար/ դրամ:

4/ խաղատների կազմակերպման համար 500.000 /հինգ հարյուր հազար/ դրամ:

5/ շահումներով խաղերի կազմակերպման համար 250.000 /երկու հարյուր հիսուն հազար/ դրամ:

6/ վիճակախաղերի կազմակերպման համար 100.000 /հարյուր հազար/ դրամ:

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1/ ալկոհոլային խմիչքի սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 /հազար/ դրամ:

2/ թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ:

3/ այլ արտաքին գովազդի համար՝ 1000 /հազար/ դրամ:

4/ համայնքի տարածքում տեղադրված դատարկ գովազդային վահանակների յուրաքանչյուր քառակուսի մետրի համար սահմանել 700 /յոթ հարյուր/ դրամ:

8. Համայնքի ադրոդից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար, տեղական տուրքը ընթացիք տարվա համար սահմանվում է 1000 /մեկ հազար/ դրամ:

9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ ընթացիք տարում 3000 /երեք հազար/ դրամ:

Տեղական վճարների դրույքաչափերը

Համայնքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ տեսակները՝

1/ համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 10.000 /տաս հազար/ դրամ:

2/ տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողեր հատկացնելու, հետ վերծնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 3000 /երեք հազար/ դրամ:

3/ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար 3000 /երեք հազար/ դրամ:

4/ Արմաշ համայքում սահմանել աղբահանության վճար մեկ շնչի հաշվով տարեկան 1200/մեկ հազար երկու հարյուր/ դրամ, երկու շնչի հաշվով 2400/երկու հազար չորս հարյուր/ դրամ երեք շնչի հաշվով 3600/երեք հազար վեց հարյուր/դրամ, չորս և ավելի շնչերի դեպքում 4800/չորս հազար ութ հարյուր/ դրամ:

Ավագանու անդամներ՝ /ստորագրություններ՝ կողմ,դեմ,ձեռնպահ,նշելով բոլորի անուն,ազգանունները,ներառյալ բացակաները/

Կողմ – 7 Դեմ – 0 Ձեռնպահ – 0

1. Ս. Ադամյան Կողմ
2. Ռ. Ջեյնալյան Կողմ
3. Գ. Համբարձումյան Կողմ
4. Ք. Մկրտումյան Կողմ
5. Բ. Շահնազարյան Կողմ
6. Մ. Շահվերդյան Կողմ
7. Յ. Պետրոսյան Կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Հ.ՋԵՅՆԱԼՅԱՆ

/ստորագրություն/ /անուն, ազգանուն